ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ.—Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես բազմ. 1922 էջ 254)

ԻԵ.

Յոգնան եպիսկոպոս հետեւեալ թուղթին մէջ Յարութիւն եպս.ին Հռոմմանելու լուրը առ Մխիթար հաղորդած ատեն՝ թէ և ուրիշ բան չ'ըսեր այդ մասին, սակայն անոր շարժառիթն եղած է յաջորդ տարւոյն մէջ կատարուելիք քահանայապետական մեծ Յոբելեանը (Գալեմք. «Կենսագրութիւններ երկու Հայ Պատրիարքներու...» էջ 143)։

Ամենէն դիտելին սակայն այն է՝ որ թուղթս ուրիշ խիստ հետաքրքրական խնդիր մը երեւան կը բերէ յանձին Մխիթարայ։ Անոր մասին Յաւիտենական Քաղքին մէջ խորհուածն ու ձեռնարկները՝ ոչ լոկ ազգային բարձրաստիճան եկեղեցականներու, այլ մինչև իսկ գերագոյն Իշխանութեան կողմանէ՝ կու գայ ինքնին անգամ մ'ալ հաստատել Ուխտիս Հեղինակին հոյակապ և ոսկեշող ձիրքերը, որոնք՝ զոր օրինակ՝ սքանչացող հոգիներու սիրակէզ զոչել տուած են՝ նամակիս թուականէն 13 տարիներ առաջ՝ այսպէս. «Ո՛վ արուեստագէտ և պայծառ աստղդ պատուական։ «Ո՛վ լուսինդ լրացեալ լուսատու գիշերոյ և երեկոյացեալ ժամանակիս։ Ո՛վ աղբիւրդ «գիտութեան և ակդ քաղցրահամ և առատաբուխ՝ որպէս անհուն գետոց. առոգա«նելով գնացք գետոց քոց ուրախ առնեն զքաղաքսն Աստուծոյ։ Ո՛վ իմաստութեան «աղբիւր ուղիղ գնացք ընդ հետոցն Աստուծոյ։ Ո՛վ հիմնարկող հաւատոյս մերոյ «հայկազնեացս». («Schiarimenti e Documenti» էջ 11). և այլն, և այլն։

Գնդապետ Գրիգոր տեառն տեառն
Մխիթարայ վարդապետի եղբօր մերոյ ի Քրիստոս

Ցայտ առնեմ սիրով, Յարութիւն եպիսկոպոսն ի ԺԹ դեկտեմբերի եմուտ ի Հռոմ, և եղբայր Մարկոսն ընդ նմա...։ Եկն և տէր Յակոբն և երեր զչափ պատկերի միոյ, թարց գրոյ և ծանուցման՝ թէ գինչ պատկեր իցէ այն, որ պարտիմ տալ նկարել, կարծեցեալ թէ ընդ մենսինեարին, եղբայր Մարկոսին յղեցես և ծանուցես ինձ, իբրեւ հարցն ցնոսա, ասացին ոչ գիտեմք։ Եւ մեաց որ հրամանքդ անձամբ եկեալ տայցես զնա նկարել, քանզի միչտ խորհէաք ընդ Սուգիաս եպիսկոպոսին, և նա ընդ տոն ձիւզէպին գտանել զկերպ և զեղանակ իմն՝ բերելոյ զքեզ ի Հռոմ, լինիլ հոգաբարձու ազգին մերոյ ողորմելոյ և այլն։ Իսկ Աստուած անօրինեաց այսպէս, զի սուրբ ժողովն կոչիցէ զքեզ այժմ քարոզութեան աղագաւ, որ եկեալ ուսուցանիցես զուխտաւորսն Հայոց, որք են բազումք

digitised by A.R.A.R.@

այժմ, և գալոց են ևս։ Եւ այսու յուսամ թէ բաղձանք մեր կատարիցին. այսինքն զոլ և լինիլ ի Հռոմ Փրոգուռաթօր ոմն ազգին հայոց. գիտուն և տեղեակ ամենից իրողութեանց նոցին, և ծանօթագոյն ամենամեծ գիտութեանն զորովականի մօր մերոյ սրբոյ եկեղեցւոյն կաթողիկէի, ոչ խնդրօղ փառաց և պատուոց, և կամ սիրօղ շահուց յատկականաց և այլն, զոր տէր պարգեւեալ առաջացուսցէ ամէն։ Սուրբ Հոգոյվ զիրն ևս՝ կարծեմ այս փոսթիւն ժամանել առ քեզ, և վասն ապրելեացն տալոց իցեն քեզ ամիսն ԺԵ սկսութ, որ մի կամ Բ կրօնաւորք նստցիս ի Հռոմ։ Զայս ամենայն որ գրեցի, ոչ ոք գիտէ, բաց ի տօն Զիւզէփէն, Սուգիաս եպիսկոպոսէն և Ղադրէմիզէնց Յոհանէն՝ որ է թարգման նորին։ Բարի է մնալն ի ծածուկ, մինչ ի ժամանումն քո ի Հռոմ. յայսմանէ բարութիւնք մեծ ծնանին՝ եթէ գայցես վաղվաղակի...։

Գերարգելութեան քոյոյ նուաստ ծառայ

գրեցաւ 1724 դեկտ. 23 *Յոհան Եպիսկոպոս Սեպաստիոյ*
ի սուրբ Օնոֆրին ի Հռոմ

ԻԶ.

Կը հանենք հետևեալ պատառիկը Միխիթարայ աշակերտներէն՝ Հ. Միքայէլ վարդապետ Վարդերեսեան Սեբաստացւոյ Նամակէն, զոր Աբբահօր գրկած է։

Վիրապատուհիգաւանեցի տեսան տեսան Աբբայ Հօրդ իմոյ

Միխիթարայ Աստուածաբանութեան Վարդապետի

... ի 23ն սեպտեմբերի եկն լուրն առման կէնճէյու, հինգ օր տօնանմայ արարին թօփից, և ի վերջի գիշերն զարմանալի պայծառութիւն լապտերաց ի վերայ ծովու ի վերայ նաւուց և նաւակաց Ըսկուտարու մինչև ի կէմբրիկն Ստամպօլու պայծառութիւն և այլք արհեստական հուրք և որոտմունք, բերդից և զղեկաց այրեցմունք, յորոց հուր արհեստական իբրեւ զսոս և իբրև զշրմուխ բարձրանայր յերկինս, և անթիւ թօփից արձակմունք, աւելի քան զհինգ ժամ տեւեաց։ Բազում աղշկունք փոքունք գերիք, հազիւ գտանի գնող ի քրիստոնէից, ազէտ նոցին է յոյժ։ Ցոմանց լուաք թէ խաբէաբար գունտք հայոց ի ձեռս անկեալք սրախո(ղ)խողք եղեալք են. և յոմա(ն)ց թէ տոնկունք բազումք անկեալք են ի նոցանէ։...

Մնամ պատրաստական ամենայնի ես նուաստ ծառայ

Հայր Միքայէլ Վարդապետ

գրեցաւ գիրս ի թուին Քրիստոսի 1725ին
հոկտեմբերի 5

ԻԷ.

Շահաւէտ թղթակցութեանց շարքը առաջ կը տանի Յովհան եպիսկոպոս՝ իր մտերմական նամակներովը Հռովմէն առ Միխիթար՝ ստէպ ազգային — եկեղեցական հարցերու չուրջ տեղեկութիւններ հաղորդելով, անոնց կարգէն է և հետևեալը։

digitised by A.R.A.R.@

Գերյարգելւոյ Հօր տեառն տեառն
Մխիթարայ Աբբայի

...ներ հոկտեմբերին խռովութիւն մեծ անկաւ ի մէջ Խաչատուր վարդապետին և տէր Ստեփաննին։ Պատճառն է, զի մուրհակ չարախօսութեան տուեալ են ի սանթուֆիցն հինգ փունթով ի վերայ կարգաւորացն արեւելականաց, թէ փոփոխեալք են զսովորական արարողութիւնս եկեղեցւոյն իւրեանց, մանաւանդ ի պատարագն։ Գիրն տւաւ Սաքրիպանդին, և նա Խաչատուր վարդապետին, զի ցուցցէ կարգաւորացն և գրեսցէ զպատասխանն։ Գրեաց նա զպատասխանն և տարեալ եցոյց կարտինալին, որ ասաց. Լաւ է, բայց պիտոյ է զի ստորագրիցին եպիսկոպոսք և քահանայք գտեցեալքն ի Հռոմ։ Եւ նորա առեալ զգիրն մինչ դարձաւ ի ժամն, էգիտ զտէր Ստեփանն, որ եկեալ էր ի եայլայէն։ Պատմեալ նմա զիրն և ցուցեալ զգիրն՝ ասացեալ էր թէ պարտի ստորագրել։ Եւ նա ձգեալ էր առ վաղին։ Եւ ի վաղին ընդ առաջագրելն լւաւ թէ ի՞նչ կարտորաս, կամաց կամաց։ Միւսն ես զայրացեալ ելանէ առ Վրդանէս եպիսկոպոսն, զի տացէ նմա ստորագրել. ես նա հրաժարեալ է ի ստորագրելոյն, թէ ստութեան ես ոչ վկայեմ, զի ներ հայոց ոչ գոյ թիւ պատարագ։ Ընդ բոլորքիլն լուեալ է ի տէր Ստեփանէն զնախատինս ոչ թեթեւս։ Գնաց առ կարտինալն և ասաց, թէ են ոմանք, որք ոչ կամին ստորագրել. և նա հրամայեալ էր առաջադրել ամենեցուն, զի ծանիցէ թէ ովք իցեն ստորագրողքն և ոչ կամեցողքն։ Նա մինչ առեալ զթուխտն և դարձաւ, Վրդանէս եպիսկոպոսն, տէր Ստեփանն և տէր Պաղտասարն գնացին առ կարտինալն տալ զպատասխան թայց գրի և զանկատեալք զնմանէ թէ ամենայնում իրի ներ խառնէ զինքն, և զփոքր իրն մեծացուցանէ աղաղակաւ, մինչ ոչ գտանի ոք՝ որ պատասխանիցէր առաւել բարեպէս...

Գերյարգելութեան քոյոյ նուաստ ծառայ

Յոհան Եպս. Սեպաստիոյ

գրեցաւ 1725 Նոյեմբերի
ի սուրբ Օնոֆրին

(Շարունակելի)

Հ. Գ. ՏԱՑԵԱՆ

ԱԶԴ

Կը խնդրուի մեր այն բաժանորդներէն՝ որոնք ցարդ չեն վճարած իրենց տարեկան բաժնեգինը՝ փութալ հասցնել խմբագրութեանս։ Տարեկան բաժնեգին ֆր. զաղ. 25. տոլ 5։

Խմբագրութիւնս պատասխանատու չէ որեւէ կորուստի՝ յետ կարեւոր եղած խնամքով առաքումները կանոնաւորապէս կատարելու։

Հասցէի որեւէ փոփոխութիւն՝ հարկ է կանխապէս հաղորդել խմբագրութեանս։

Յանձնարարեալ (Recommandé) ծրարով ստանալ փափագողք պէտք է յաւելուն բաժնեգնոյն վրայ ֆր. [illegible]

digitised by A.R.A.R.@